«ALISO CANYON»-Ի ԳԱԶԻ ԱՐՏԱՀՈՍՔ

Առողջական փաստերի ամփոփում տնային կենդանիների համար

Ակնարկ

Տվյալ փաստերի ամփոփումը տեղեկություններ է տրամադրում «Aliso Canyon» պահեստավորման հաստատությունում բնական գազի արտահոսքի մասին և հնարավոր առողջական ազդեցությունների մասին տարածքում գտնվող տնային կենդանիների վրա:

- Բնական գազի արտահոսքը սկսել է 2015 թ. հոկտեմբերի 23-ին:
- Բնական գազը Կալիֆորնիայում մեծ մասամբ բաղկացած է մեթանից՝ անհոթ գազից:
- Քանի որ բնական գազն անհոտ է, դրան ավելացվում է չնչին քանակի հոտավետ նյութեր, որոնք կոչվում են մերկապտաններ, որպեսզի գազի արտահոսքը հեշտությամբ հայտնաբերվի: Մերկապտանները բնական գազին տալիս են «փտած ձվի», «սխտորի» կամ «սկունսի» հոտ:
- Այս հոտավետ քիմիական նյութերի ազդեցությունը կարող է կարճաժամկետ առողջական հետևանքներ ունենալ տնային կենդանիների համար, սակայն հայտնի չէ, որ այն երկարաժամկետ կամ մշտական առողջական խնդիրներ է առաջացնում:

Հնարավոր առողջական հետևանքներ տնային կենդանիների համար

- Աչքերի, քթի ու կոկորդի գրգռում
- Հազ, փռշտոց, շնչահեղձություն
- Թմրածություն
- Սրտխառնոց ու փսխում
- Գլխապտույտներ
- Մաշկի հնարավոր գրգռում
- Ձկներն ու թռչունները կարող են ավելի զգալի լինել բնական գազի ազդեցություններին, քան շներն ու կատուները:

Խորհուրդներ

- Տնային կենդանիներին ներսում պահեք, երբ առկա է գազի հոտը:
- Եթե հնարավոր է, տեղափոխվեք, երբ առկա են ախտանիշները:
- Պատուհաններն ու դռները փակ պահեք:
- Հետևեք կենդանիներին առողջական ազդեցությունները նկատելու համար:
- Դիմեք անասնաբույժի, եթե տնային կենդանիները ցուցադրում են նշված առողջական ազդեցություններից որևէ մեկը:
- Հետևեք ձուկ պարունակող դրսի ջրավազանների ջրածնային ցուցիչին (pH): Բնական գազի հավելումները կարող են ազդել ջրի pH-ի վրա ու բացասական առողջական ազդեցություն ունենալ ձկների վրա:
- Ձեկուցեք ձեր տնային կենդանիների հնարավոր հիվանդությունները Անասնաբուժական հանրային առողջության ծրագրին առցանց՝ http://www.publichealth.lacounty.gov/vet/Aliso_leak.htm կայքում:

Լրացուցիչ տեղեկություններ

- Եթե դուք կամ ձեր անասնաբույժը լրացուցիչ հարցեր ունեք կամ լրացուցիչ տեղեկություն եք ցանկանում ստանալ, խնդրում ենք զանգահարել **Անասնաբուժական հանրային առողջության ծրագիր՝ 213-989-7060 հեռախոսահամարով (երկուշաբթիից ուրբաթ օրերին, ժամը 8 am-ից 5 pm-ը)**: Գազի արտահոսքի և մարդու առողջության վրա ազդեցությունների մասին լրացուցիչ տեղեկությունները մատչելի են http://www.publichealth.lacounty.gov/media/gasleak/ կայքում: